

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշխարիտ	համար
արեկակ	12 ֆր.
վեցամսայ	7 "
Արսասահմանի	
համար արեկակ	15 ֆր.
վեցամսայ	8 "
Ամերիկայի	համար
արեկակ	3 ռ.
վեցամսայ	1.50 "

Ծանուցում տղր և ուսջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին և ելի սնգումներու համար 20 0/0 զեղջ կըլլայ:

Վառուսյի համար ձեռ ֆե 40 սանթիմ է

ՉԱՐՔԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂՄՔԱՍԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵՔԻՆԻ ԵՒ ԶՈՐՔՅՈՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ
դր կըլ խմբագրութ. սնս
հասցեիկն

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoun"
Varna (Bulgarie)

Պուշխարիտ համար
ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ ջեկ
տրութիւնք

ՉԱՐՔԻՆԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿՍՈՒՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱԸ.
ԽՈՒՈՐԸԱԼ ՍՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱՍ.
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ .

Տոմսակ գնել փափաքողները կրնան
իրեն գրիմել՝

Զար-Պորիս փողոց Վառնա

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԱՂԻՃԸ

Պաշտօնի նախարարութեան
անկեղծաբար անկումէն յետոյ,
Ռուսիայի նախարարութիւնն է որ
կրնայ անսպասելիօրէն:

Արդէն Ռուսիայի նախարարու-
թիւնը Մարտի խնդրին ծագու-
մէն ի վեր կորսնցուցած էր խոր
հըրդարանին համակրութիւնը իր
անորոշ ուղղութեան պատճառաւ:
Երեսփոխաններէն շատերը սկսած
էին անոր երեսին զարնել թէ
իր ըրած յայտարարութեան ու
կատարած գործին մէջ հակասու-
թիւն կը տեսնուի, և թէ իր նախա-
րարութիւնը որոշ մեծամասնու-
թեան մը վրայ չէր հիմնուած:

Այս երկու նախարարական փո-
փոխութիւններն ալ մեզի համար
շահեկանութիւն մը կը ներկա-
յացնեն, այն պատճառով որ, ա-
նոնց յաջորդողներուն մէջ կը
նշմարենք անուններ որոնք Հայ
կական դատին անկեղծ պաշտ-
պաններ եղած են:

Եթէ Անգլիոյ մէջ ձէյմս Պը-
րայսներ այսօր կառավարութեան
գլուխ կը կանգնին որոնք յարմար
պարագային, չըսեմ Հայկական
խնդիրը լուծել, բայց գոնէ
հայոց տառապագին վիճակը ա-
մօքելու լուրջ ջանքեր չի պիտի
խնայեն, Թրանսայի մէջ ալ Քլե-
մանսօներ, Լէօն Պուրժուաներ,
Պրիանններ այս միջոցիս նախա-
րարութիւնը կը կազմեն, որոնք
ամենէն աւելի դիւրաւ պիտի
հասկնան զիրար ու համաձայնին
Անգլիոյ հետ:

Ամենէն փափագելի գրու-

թիւնն էր որ ստեղծուեցաւ այդ
երկու երկիրներուն մէջ, որուն
կրնային բազմալ հայերը երկու
ազատական ու հայասէր գահիճ-
ներ միանգամայն իշխանու-
թեան գլուխ անցած են: Այլեւս
մտաւոր ապագան պիտի պար-
զէ թէ եւրոպայի հայասիրու-
թիւնը որ ստիճան դրական
օգտակարութիւն մը կրնայ ու-
նենալ մեզի համար:

Թրանսական նախարարութիւ-
նը իր ներքին խնդիրներով ար-
դէն այնպիսի պարագաներու առ-
ջեւ կը գտնուի այս միջոցին որ,
երկաքատեն չենք յուսար որ
հայկական հարցի նման անշա-
հախնդիր հարցերով զբաղելու
առիթ ունենայ:

Նախ եկեղեցւոյ անջատման
օրէնքին գործադրութեան մի-
ջոցին ծագած գոռարութիւն-
ները, որոնք Ռուսիայի նախա-
րարութեան անկումը պատճառե-
ցին, արդի նախարարութեան
առաջին մտահոգութիւնը կը
կազմեն: Ընդգիծութիւնը հետ-
զհետէ կը զօրանայ, կղերական-
ները կը գրգռեն իրենց հասա-
րակութիւնը որ զենքով դիմա-
ւորեն կառավարական պաշտօն-
եաները, իսկ կառավարութիւնը,
բնականաբար, կը խուսափի
բռնի ու գործածելու:

Մարտի խնդիրը երկրորդ մը
տահոգութիւնն է նոյնպէս արդի
նախարարութեան: Թէեւ կառա-
վարութեան այժմու ներկայացու-
ցիչները բոլորովին խաղաղասէր
և Մարտի խնդրի մը նոյնիսկ
գոյութեան հակառակորդ անձեր
են, և սակայն այդ խնդիրը այն-
պիսի վճռական հանգամանք մը
առած է որ անկարելի է ընկրկիլ
այլեւս: Մարտի ոստիկանական
հարցն է որ անլուծելի կը մնայ,
քանի որ երկու վիճոյ կողմերը
անհաշտօրէն կը պնդեն իրենց
առաջարկութեանց վրայ: Թրան-
սա և ոչ մէկ առիթով չուզեր
ընդունիլ երրորդ պետութեան
մը միջամտութիւնը Մարտի ոս-
տիկանական խնդրին մէջ: Գեր-
մանիա կը պնդէ որ անպատճա

չեզոք ընդհանուր ոստիկանական
հսկիչ չը ըլլայ: Այս մնացած է
միակ գոռարութիւնը: Անշուշտ,
ճանատնդ նկատի ունենալով
Պուրժուայի նախարարութեան
խաղաղասէր ձգտումները, Մա-
րտի խնդիրը սպառնական ըլ-
լալէ դադարած կը համարուի այլ
եւս: Ինչ որ ալ ըլլայ, միջին
ճամբայ մը պիտի գտնուի, և
համաձայնութիւն մը գոյացնե-
լով խնդիրը պիտի վերջանայ:
Այսու հանդերձ մինչեւ այս և
ուրիշ խնդիրներու կարգադրու-
թիւնը, ֆրանսական գահիճը
չպիտի ուզէ մեծ տեղ մը շնոր-
հել իր ծրագրին մէջ արեւելեան
հարցին, հաշուի մէջ չի դնե-
լով անշուշտ անակընկալները:

Սպասենք որ ժամանակը մեզի
սորվեցնէ ճշմարտութիւնը: Մի-
եւնոյն ժամանակ, եթէ գիւա-
նագիտութեան սպասելիք բոն
մը ունինք, փութանք առիթէն
օգտուիլ, որովհետեւ արդէն
անգլիական ու ֆրանսական գահ-
իճները մեր դատին ամենէն ա-
ւելի մտտիկ եղող անձերէ կաղ
մեր վիճակը փոփոխութիւն մը
չըստանայ, եթէ մեր խնդիրը
քայլ մը չառնէ, այլեւս համոզ-
ուինք ուրեմն որ, գիւանագի-
տութեան բնաբան մը ակրի-
կալելու չենք, մինչեւ որ մենք
մեր բազուկներով գիւանագի-
տութեան հանգիստը չի խոռ
վենք ու վտանգ մը չըլլանք այ
խարհի խաղաղութեան: Իսկ այդ
վտանգի պահուն, համոզուինք
որ Հանթթօն անգամ մեզի բարե-
կամ կըլլայ...

Ա.—,

ՍԼԱՑԻԿ ՆՕԹԵՐ

ԼՕՆՏՕՆԻ ՀԱՅԵՐԸ

—o—

Բ.

Լօնտօնահայ գաղութն ալ բաւա-
կանաչափ թուով ջոջեր ունի իր
մէջ, որոնք մեծամասնաբար կզրա-
ղին արեւելեան գորգերու գործով և

գրեթէ Լօնտօնի է՛ն նշանաւոր կա-
հաւորիչներու—ինչպէս Մէյրը և
ընկ. ու Շուլպրէտ և ընկ. որոնք
առաջնակարգ եւ հանրածանօթ հաս-
տատութիւններ են, — հայթայթող-
ները հայ վաճառականներ են: Սի-
թի—առեւտրական Լօնտօնի կեղ-
րոնը—նիւ Սթրիթը ալ ու ձախ հայ
անուններով է զարդարուած, սեր կը
գտնուին իրենց պաշտօնասենեակ-
ներն ու մթերանոցները:

Ինչպէս ամէն անկիւնի, այս կող-
մի հայ հարուստներն ալ երեք բնա-
ծին յատկութիւն ունին— եկեղեցի
կառուցանել, հոգաբարձու կարգուիլ
և իրենց զիտոյ գծրութեամբ վաճառել:
Կը տեսնէք որ ազգային ճգնաժամին
հանդէպ ունեցած անտարբերութեան
ներդրում եմ, որովհետեւ, գիտեմ.
այո՛, թէ խեղճերը սեղադրուելիք
անձեր չեն, բայց... բայց... ի վերայ
այս ամենայնի ներքին, անձնական
շահեր կան՝ զորս հնար չէ զոհել...
անմիտ խաղի մը համար: Մեղադ-
րե՛լը, եւ այն ալ Լօնտօնի հայ հա-
րուստները, եւ անոնց «հայրենասի-
րութեան» վրայ տարակուսիլ, կա-
րելի չէ, մասնաւոր ատենցմէ մէկ
լուսնտօնի, որուն հետ առաջին բառ
մը փոխանակած պահուէ՛ իր ազգա-
սիրութիւնն» ու «Լուսաւորականու-
թիւնը» կասկածի տակ դնող լուս-
նտած գեղին երեսը կասկարմիր եր-
կաթի գոյն կառնէ և անմիջապէս
կը յայտնէ թէ՛ ինք կատարած է իր
ազգային պարտականութիւնները»
այն ատեն՝ «երբ դեռ դուն ազգ
անունը չէիր լսած: Որոնք են, Չը
կրնար հանողին պատմել— միջնա-
դարեան կաթոլիկներու աւետարա-
նին եւ վերակազմեալ Հնչակեաննե-
րու ծրագրին պէս մատչելի չեն ա-
մեն մահկանացու անհատի, Բայց կը
թուէ ոմանք՝ է՛ն վերջիններէն—
թուժեալ որբավաճառին տարին
անգամ մը նուիրած 30—35 շիլին-
նոց ոչխարը, Պատանիի համար
և բաժանորդագին մէկէն զրկելը եւ...
(աս ալ դէպի հայ. եկեղեցին տածած
անպարագիր սէրը ցոյց տալու հա-
մար կըսեմ) Մեծ պահոց քառասուն-
քին առաջին եւ վերջին շաբաթը
մի մի այն մեղրով եւ հացով անց-
նելը, զրկելով ինքզինքը ալ
սնունդէ... Ուստի, առանց պահանջ-
կոտ ըլլալու՝ լուս անցնինք:

Լօնտօն չը կրնար պարծիլ միւլի-
ոննոց եկեղեցիով, ո՛չ նոյն իսկ հա-
զարնոց շէնքով մը եւ, թէ որ ատ-
կէ աւելի սրբազան շահերը չըլլային,
տարակոյս չուներ թէ այսօր Լօնտօ-
նի մեծատուն հայերը խուժած էին

Բարիք, քան թէ ներկայ անպատ-
ուութիւնն ու սրբապղծութիւնը
տանիւր—այսինքն, եկեղեցի անուշը
կրող ու լի ան ան լը չէնք մը
զուրկ ուստանի մը մէջ ապրիլ:

Հետեւաբար, Լօնտօն չկայ հայ,
եկեղեցի: Տեղական բարեպաշտ հա-
յերու երկիւզած անօթի հոգիներուն
սնունդ մատակարարող չէնքը Ռօսերը
Օք կոչուած մասին կաթնլիկ մայ-
րապետներու մատուցել էր, վարձ-
ուած—զսպեցէ՛ք խնդուքնիդ—Հայ,
Քրիստոնէական Ընկերութեան կողմէ,
որուն երեք անդամն ալ,—այդ էր
կարծեմ անդամութիւնը— ոտքերուն
մատեն մինչեւ զագաթնին Իրապէս
տիրացու քրիստոնէական էին, Քա-
հանայ չկար, տիրացուն նախագահ
—հիմնադիրը: Աստուածաշունչ մը
գտած էին եւ հատ մըն ալ ժամա-
գիրք, ուր կերպէին ամէն ինչ՝ բա-
ցի եղանակաւ բանէ մը, ուր կը
խօսէին ինչ որ չէին գիտեր եւ ուր
կը վիճէին այնպիսի բաներու վրայ
որ չէին հասկնար.—այո՛, սա ալ ա-
մօտ եկեղեցի էր, ուր Աստուածա-
շունչը մտիկ ընելու գացողները Աստ-
ուածաշունչը կը քննադատէին՝ ի
մեծ սրտմտութիւն տիրացու—նախա-
գահ—հիմնադիրն...

Հայ քրիստոնէական ընկերութիւ-
նը քանիցս դիմումներ ըրաւ առ
բարեպաշտ ազգայինս Լօնտօնի, սա-
սակայն ճիշդը միացին ամուլ, Հոս
պարտականութիւն մը կը ծանրանայ
վրաս, որմէ խոյս տարով, բռնարա-
րած եւ եղծած պիտի ըլլայի... չա-
րամտօրէն, մեր հայ հարուստներու
ընածին յատկութեանց է՛ն զլիաւորը
—ըսել կուզեմ, եկեղեցի բարձրաց
նելու ինքնաբոյս գաղափարը իրենց
պարտա գանձին մէջ:

Եթէ Հ. Ք. ընկերութեան «առ
բարեպաշտ ազգայինս»—իմա՛ հա-
րուստները—ուղղած աղերսագրիւնները
մնացած էին ապարդիւն, մի՛ շփո-
թէք դա անտարբերութեան հետ,
կեղծերուն առօրեայ հոգն էր դար
ձած. բայց, դժուարութիւններ
չատ կային.—Նախ հակառակող մե-
ծամասնութեան մը պատնէջը՝ որ
պարագիտներէ չէր բաղկացած՝ որ
պէս զի քանի մը հարիւր ֆրանքով
ձայնը կտրէր եւ ի հարկին տէրտէրին
ալ զրդէր Դ է Տ է օ մ մը կարգալ չի-

Է Տ Վ Ը Ր Ո Ւ Օ Լ Ս .

ԿԱՐՍԻՐ ԷԶԵՐ
ՑԱՐԻՉԱՅԵՆ

ԵՂԻՍԱՅԵԹԻ ԸՆԹԱՑՔԸ

Նկարներէն պիտի նկատէք որ հե-
ղինակներ ներկայացուցած են Եղի-
սարէթը որպէս գեղուհի մը, կը
հագնեցին անոնք իր մազերն ու
մրափուն աչքերը, իր գեղեցիկ ճա-
կատն ու լի շրթները, կեղքափակեն
իւր նկարագիրը որպէս ամէկը սիրա-
հար հաճոյքի, ժամանակակից ար-
զիստներու նկարները հազիւ թէ
այդքան շտալ ըլլան, կը ներկայացնեն
լայնբերս կին մը, քնատ աչքերով եւ
կոշտ ընդունով, կէտի մը վրայ միայն,
արդիսդ ու հեղինակ, կը համաձայնին
Հեղք, շուայտ կնոջ մը կերպարանքն
էր:

Եղիսարէթի մէկ ուրիշ արձանա-
գրուած է, Չէր ուզեր որ մէկը սպան-
ուի իր թագաւորութեան միջոցին:

նողին հորը եւ պապերու հոգւոյն,
Չէ՛, այդպէս չէր. հակառակողները
թէեւ օրակա՛ն չոր հացով ապրող,
այլ եւ ազատ կամքի տէր երիտա-
սարդներ էին.—խ ա ո ը շ մը բաներ,
Չոչական բառարանով—որոնցմէ պար-
տութիւն այնքան ալ տանելի պարա-
գայ մը չէր: Կար երկրորդը՝ որ պար
տութիւնը կը զարձնէր անխուսափե-
լի եւ էր՝ իր վարքն ու բարոյականը
արթութի կարօտ Եւրոպայի «առաջ-
նորը» Իւթիւնեան եպիսկոպոսին
անձարակ ու անտարբեր ընթացքը,
որ Լօնտօնը իր երբեմնակի այցելու-
թիւններով պատուած 5-6 օրերուն
գիշերները Լէյսթըր Աքուէր էր, Ի-
քէնտիլի Սըրքըս—միջազգային յայ
րատութեան ցուցադրաւարը—«յրդ
ջիկ որսալով» կանչէր աշխարհակա-
նի տարազով, իսկ ցորեկուան մէկ
մասն ալ քունով եւ մէկ քանի ընա-
րեալ հարուստներուն տունները օրհնե-
լու պաշտօնով՝ «Իրինս Ալպէրթ»
հագնուած:

Ուրեմն խնդիրը միաց երեսի վրայ
մինչեւ Լօնտօն հասաւ Մանչեսթըր
պաշտօնանկ եղած «ուսած սոսրակ-
ներով» տէր-պապան:

Հ. Ք. Ընկերութեան «արժանապա-
տիւ տէր հօր» ըրած առաջարկը երկ-
նաճեմ թախչներ տուաւ վերջնոյս,
Նախ քան հրապարակաւ գործի սկը-
սիլը, տէր-պապան այցելութիւններ
ըրաւ իր «բարեպաշտ հօտին» — իմա՛
ուկի ունեցողներուն—եւ խնդիրը
կարգի դրաւ, Ու որ մըն ալ ծանու-
ցաթղթեր կը զրկուին Լօնտօնահայ
գաղութի անդամներուն՝ Ս. Պատա-
րագին ներկայ գտնուելու, ուր պի-
տի խօսուէր նաեւ «չատ կական եւ
ուշագրութեան արժանի խնդրոյ մը
վրայ»:

Արդէն շոջերը գիտէին «էական
խնդիրն» ընթաց, հետեւաբար փո-
թացած էին իրենց մեծ անձերու
ներկայութեամբ պատուել կաթնլիկ-
ներուն պզտիկ մատուցը:

Բայց փորձը անյալող անցաւ ու
տէր-պապան, ո՛չ միայն Լօնտօնէն,
այլ եւ Սեղիքային ալ փախաւ հողա-
թափները ձեռքը առած:

Այս պարտութիւնէն սահմակած
Լօնտօնի շոջերը յիշեցուցին Իւթիւ-
նեան «սրբազանին» իր պարտականու-
թիւնն՝ եւ սա, ճարահատ, կիրակի

Հոյակապ որոշում մը՝ որ փոքր ինչ
չփոթեցուց հասարակաց դահլիճներու
Որովհետեւ այս արժանաւոր մարդիկը
ամենանուրբ սառի վրայ կը կոխէին
իրենց պարտականութեանց կատար-
ման պահուն:

Իրենց զբաղումն էր քննութ ճօճել
—առանց աղետալի հետեւանքի, լե-
զուներ, դուրս քաշել—առանց կեանք
վտանգելու. փշրել մարդկային մար-
միններ եւ կեանքի շող մը միայն
պահպանել:

Եղիսարէթ Պետրոսի աղջիկն էր:
Ու խտած էր չը սպաննել, սակայն
տանջափայլը խանձիչն ու սգրա
բատօն կը գործէին շարունակա-
բար:

Ահա պատմութիւնը գեղանի տիկ-
նոջ մը, նախալիտի, որ մեխակա-
գոյն կը հագուէր:

Մեխակը գոյնն էր՝ որ է՛ն ա. ե-
լին կը պատշաճէր Եղիսարէթի, Հե-
տեւաբար ուզա՞ց մը երեւցաւ թէ՛
Արքունական և ո՛չ մէկ կին պիտի
նմանիլ փորձէ Ցարինային, նախա-
լիա երեւցաւ մեխակագոյն, ու Եղի-

մը բարձրացաւ բեմ, ուր ներկայ
էին շոջերու մէկ մասը եւ իր հե-
տորական ամբողջ թափով սկսեց
թուել Լօնտօնի նման հայ գաղու-
թին հոգեւոր զննական սնունդէ եւ
հայ. եկեղեցին չը յիշեցնող չէնք մը
զուրկ ըլլալուն ամօթն ու անպա-
տուաբերութիւնը եւ ապա. որպէս
«հօտարիմ հովիւ» թելագրեց
«հօտ»ին անմիջական հիմք զնել հան-
գանակութեան մը եւ սկսել գործի,
որով եւ իւրաքանչիւրը կատարած
պիտի ըլլար իր ազգային պարտա-
կանութիւնը... Ի՞նչ արդիւնք ունե-
ցաւ կը յուսաք:

Մ. ՑՈՒԱԿ
(Շարունակելի)

ՄԱՔՕՍՑԻՆ ԴՈՐ ԿԱՆՈՆԱԿԻՐ

Այս թիւէն կը սկսինք թարգ-
մանել պուրկական մաքսային կա-
նոնագրի կարեւոր յօդուածները, ո-
րոնք մեր առեւտրական դասակար-
գին կրնան օգտակարութիւն մը ու-
նենալ:

Յօդ. 7.— Յետ քննութեան մաք-
սային սուրճէ գործ են, բացի այն
առարկաներէն որոնց ազատ մուտքը
մաքսային թարիֆներուն մէջ բա-
ցայայտօրէն նշանակուած է, նաեւ
հետեւեալ առարկաները.

ա) Այն բոլոր առարկաները որոնք
զանազան կրօնքներու յատուկ տա-
ճարներու մէջ արտոդու թեանց ա-
տեն գործածուելու կը ծառայեն, ե-
թէ նոյնանման առարկաներ երկրին
մէջ չեն պատրաստուիր:

բ) Ապրանքներու նմոյշներ, որոնք
ուրիշ գործածութիւն մը չեն կրնար
ունենալ:

գ) Բացարձակապէս չոգնեաւային
ընկերութեանց նաւերուն համար ե-
ղող հանքածուխը որ ելեւմտից նա-
խարարութեան մասնաւոր թաղտու-
ութեամբ պուրկական նաւահան-
գիստ մը կը հանուի:

դ) Արեւելեան երկաթուղիներու
ընկերութեան համար ներածուած
նիւթերը, ինչպէս երկաթուղիի ձօ-
ղեր, իր յարակից նիւթերը թրա-
վիսներ, լապտեր և ելկտրական
գործիք, ինչպէս նաեւ կառախուժ-

սարէթ ապտակեց գէնի: Դեռ աւե-
լի գէշը կայ. կասկածեցաւ էն դաւա-
ճանութեան մը մասին ու իր ազ-
գականները ձերբակալուեցան, մըս-
րակուեցան տանջափայտուեցան, որ
պէսզի Եղիսարէթի կասկածանքները
նեցուկ մը ունենան:

Այդպիսի բան մը տեղի չունեցաւ,
բայց եւ այնպէս սա չարգիւց գրծ
բախտ նախալիտան կատարեալտեղին
բարձրանալէ,—իր գուկին ծնունդէն
քանի մը շաբաթ առաջ:

Սեղծ նախալիտ կը մաքսուէր, երբ
դահլիճը կոշտաբար էնոր հանդերձը
պատեց ուսերուն վրայն: Ճշալով
կառաւնափայտին վրայ էր ինկած՝
երբ անգուր փոկը իջաւ իր սպիտակ
մորթին վրայ: Ապա ծակեցին լեզուն
կարմիր երկաթով մը:

Եղիսարէթ Պետրոսի արժանաւոր
աղջիկն էր, որովհետեւ կը սիրէր
թատերաւայել տեսարաններ:

Օսգէրման, խնամակալուհիին դի-
ւանապետը, տիրացած էր իր ասե-
լութեան, և ուրիշներ եւս կային:
Քննուեցան և դատապարտուեցան

բին Պուրկարիա մտած պահուն հետը
գտնուած քարածուխը:

ե) Այն օտար ապրանքները որոնք
պուրկական նաւահանգստի մը մէջ
նաւէ մը ուրիշ նաւ կը փոխադրուին,
ինչպէս նաեւ այն ապրանքները ո-
րոնք պուրկական նաւահանգիստ-
ները կը հանուին 24 ժամուան մէջ
զրաչի պետութեան մը նաւահան-
գիստը գացող շոքեւաւ մը բեռուե-
լու համար:

Յօդ. 12.— Ելեւմտից նախարարը
կրնայ:

ա) Աւելցնել ներածութեան մաք-
սային սուրճը այն երկրներու ար-
տադրութեանց համար, որոնք պուր-
կական ապրանքներու եւ պուրկար
նաւերու համար, ուրիշ երկրներէ
քիչ նպաստուոր ընթացք մը կը
բռնեն, եւ կամ թէ պուրկական
վաճառականութեան վրայ ճնշում ի
գործ կը դնեն. սակայն ոչ մէկ պա-
րագայի մէջ այս յաւելումը երբէք
չի կրնար սովորական մաքսին կրկի-
նէն անցնիլ և կամ ապրանքին ար-
ժէքին հարիւրին հարիւրէն աւելի
ըլլալ:

Յօդ. 16 — Մաքսային իրաւունք-
ները և այլ սուրճերը, երբ 10 ֆը-
րանքը անցնին, ոսկի դրամ կը գան-
ձուին:

Յօդ. 38.— Մաքսային պաշտօնա-
տուները բաց կըլլան, բոլոր ոչ սո-
նական օրերը, օրէնքին որոշած ժա-
մերուն:

Այսու հանդերձ մաքսատուները
կամ անոնց ճիւղերը պէտք է բաց
մնան ամէն օր, առանց բացառու-
թեան, ճամբորդներու, ինչպէս նաեւ
այն տեսակ գործերու համար զորս
կարելի չէ յետաձգել:

Մասնօթ.— Մաքսատանց մէջ վա-
ճառականական գործողութիւնը կը
վերջանայ կէս օրէն ետքը. օրուան
լրանալէն ժամ մը առաջ, Այս մէկ
ժամը օրուան գործողութիւնները
քննելու և ճշտելու կը յատկացուի:
Նոյնպէս իւրաքանչիւր ամսուան
վերջին օրը մաքսատուերը ու է
վաճառականական գործողութիւն չեն
կատարեր:

(Շարունակելի)

անիւներու տակ փշրուելու:

Ահա՛ տեսարանը:

Կոմս Օսգէրման կը քաշէր զին-
ուորներու շարքի մը մէջէն: Ծե-
րուներ, կորաքամակ ու ճերմակ մա-
զերը ուսերուն վրայ թափած: Յուն-
վարի դաժան օդին կանգնած էր ան
գլխաբաց: Ունկնդրելով և զլիտ
չարժու միտ գործելով կարգացուած
իւրաքանչիւր նոր մեղադրանքին—
այդպէս հինգ թերթ կար: Դատա-
պարտուած էր անիւր տակ կոտորուե-
լու, ու ամբողջ զարմացած մնացեր
էր՝ անիւր չգոյուցութիւնը նկատելով:
Փոխան ատոր կար խոշոր կոճղ մը և
ահոնքի կացին մը, ու տարուեցաւ
ան ստոնց մօտ, դահլիճը, Եղիսարէթի
անմիջական հրահանգներուն ներքեւ,
կարելի եղածին չափ դանդաղ շար-
ժեցաւ:

Քակեց ծերուկին շապիկի կոճակ-
ները, վար առաւ օձիքը, նորէն
չտկեց, յարգարեց ու վերայարդարեց
տարտղած մազերը:
— Ծնրագրէ՛:
Ու ծերուկին ծնրագրեց դրաւ

ՕՐԸ ՕՐԻՆ

Ասկէ քանի մը օրեր առաջ, «Նարժումը հաղորդեց թէ Գերմանական երեսփոխանութեան կղերական կուսակցութեան պատկանող երեսփոխան մը, եթէ ոչ ֆիզիքայէս գէթ հոգեւորապէս, յաջողեցաւ Գերմանիոյ կայսեր «Թլիփատութեան» արարողութիւնը կատարել: Ասկէ առաջ ընկեր վարական երեսփոխան Պէպէլը երկար ու բարակ բացատրած է թէ ինչպէ՞ս Գերմանիոյ կայսրը կը փոփաքի որ բոլոր աշխարհը զինքը մահմետական կրօնքին պաշտպան երոլոր մահմետականներու խնամակար համարէ: Պէպէլ մի առ մի բացատրած է կայսեր Պոլիս, երուսողէմ և Մարոք քնալը, այս այցելութիւններու միակ նպատակը եղած է, համազել մահմետականները թէ՛ ինք իսլամութեան դատին միայն կը ծառայէ:

Այս բացատրութեան վերջ է որ կղերական կուսակցութեան պատկանող էրցայէրկէր երեսփոխանը որ կեղծ և կրօն «Գերմանական Ափրիկէի» պաշտօնական կազմակարգական կըզը Մահմետականութիւնն է, և թէ այդ երկրարածնի համար իսկապէս Վիլհելմ կայսրը իսլամութեան պետն է:

Անի յիրաւի շատ արտասովոր է, այս դարուս մէջ կղերական երեսփոխան մը, առանց գիտնալու թէ կարմիրը ինչ է, կեղծ և գերմանական երեսփոխանութեան մէջ, բողոքական Գերմանիոյ կայսրը իսլամութեան պաշտպանը և պետը կը յորջորջէ: Ի՞նչու, անոր համար որ կայսրը իր գաղթավայրերու մէջ մահմետական հպատակներ ունի: Եթէ այս միայն կը բաւէ Գեր

մանիոյ կայսեր, իր գլխին չաւժափաթթել և ինքզինքը իսլամութեան պետը համարել, ոչ աւելի նուազ իրաւունք ունի ինքզինքը թագաւորը, որուն իսլամ հպատակները, կարծիր Սուլթանի հպատակներէն շատ աւելի բազմաթիւ են: Սակայն միայն Վիլհելմին կը վայելէ այդ պատիւը: Արդեօք կը գտնուի ուրիշ Վեհապետ մ'ալ որ այս փառքին ցանկայ, և իրեն պատիւ համարէ այս տիտղոսը, որու միակ իրաւապետը Պոլսոյ կարմիր Սուլթանը կը համարուի: Մինչեւ հիմայ իսլամութիւնը կը կարծուէր գէթ թէ մէկ պետ մը ունէր, միայն, որ Պոլսոյ ճիւղ է, որ յանուն իսլամութեան ունի սրիւնաներկ ձեռքեր: Գերմանիոյ կայսրը պաշտպանելով իսլամութիւնը և ծառայելով անոր գատին, չը կրնար իր պատիւը բարձրացնել: Սակայն և այսօր իրողութիւն մըն է թէ, Վիլհելմը իսլամութեան ախոյեանն է: Ապտիւլ Համիտի միակ բարեկամը, բողոքական Գերմանիոյ կայսր Վիլհելմ Բ. է: Մարօքի Սուլթանին ձեռք կառկարելէ առաջ նա մեկնեց իր ձեռքը սրիւնարբու Սուլթանին, պաշտպանեց զանի և տակաւին կը շարունակէ պաշտպանել:

Տուաւ անոր սպանիւր բարուքելու համար զինուորականութիւնը, և քաջալերեց ջարդելու արհեստը, հիմայ ալ դրամ կուտայ անոր, հրազէն և հրանիւթ:

Քրիստոնեայ Եւրոպիոյ ճիշտ կեդրոնը, քրիստոնեայ թագաւորական գահին վրայ կը նստի քրիստոնեայ թագակիր մը, որ մինչեւ հիմայ պաշտպանած է և կը շարունակէ պաշտպանել իսլամութիւնը, և բոլոր սրտանց կը փափաքի որ զինքը «իսլամութեան» առաջնորդը անուանեն:

Թեան առաջնորդը անուանեն: Եւ ինչու, ա'րդեօք իր Ափրիկեան երկրի Մահմետականներու գոյութիւնն է որ Վիլհելմը կտախէ այնպէս անտարբեր մնալ, երբոր խնդիրը, կոտորածներէ ահաբեկած, ու սովէն լիկուած հայերու մասին ըլլայ: Թէ այդ անուշով է իրաւ, ինչու այն ժամանակ արիւնով կողոզէ այն Ափրիկեան երկրի, տեղային ապստամբական շարժումները զսպելու համար, անկասկած այնտեղ ալ յանուն Քրիստոնեայ Գերմանիոյ:

Ստոյգ է վերջապէս թէ՛ Գերմանիոյ կայսրը «իսլամութեան» առաջնորդ անուանուած ու կարգուած է այսօր, նա ապահով է հիմայ գէթ որ եթէ մեռնելէն վերջը քրիստոնէութիւնը իրեն չլծուի ապա արքայութեան գլուխն են ներս մտնել, Մահմետականութիւնը իրեն կը շնորհէ բիւրաւոր հորիններ, եթէ բարեբաստիկ օրեր չը տեսնէ երկրիս վրայ ասկէ վերջը:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ, ՀԵՂԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (Մանգուժի-էֆքեարնէն քաղուած) (Շար. Ասի. քիւնկ)

Հարցուեցաւ թէ ինք պէտք էր գիտնար իրեն զաղափարակիցներուն ընթացքն ու վիճակը, որովհետեւ բնական օրէնքը այս կը պահանջէ, ինչ էր այդ նպատակը, ժօրիսը սաւ թէ անոնց նպատակը ջարդելուն վերջ տալ էր: Նախագահը յայտարարեց թէ ջարդերուն անոնք պատճառ տուած էին: Այսպէս հարցաքննութիւնները շարունակուելով,

ժօրիսի հարցուեցաւ թէ՛ քանի որ հետապնդուած նպատակը ջարդին վերջ տալ էր եւ այն միջոցը ձեռք բերուած էր, հարկ չէր մնար այնքս մնացածը հարցնել, Բացատրութիւն ուզուեցաւ իրմէ թէ ինք ճշմարտութեան կատարելագոյն տեղեակ ըլլալուն թէ քօթիթէին խօսքելէն համոզուելով նետուեցաւ այս ընթացքին: Պատասխանեց ժօրիս թէ ինք օտար թերթերու եւ պարբերականներու մէջ հրատարակուած տեղեկագիրները կարգալով անոնց համեմատ կը գործէր: Այն ատեն զիտելաբը ունեցաւ ժօրիսի թէ այդ թերթերուն մէջ իր անսածները պարզ լուրեր չեն միայն, որոնց իրաւ կամ սուտ ըլլալը խնդրական էր: Կետեւարար տրամաբանութիւնը չէր պահանջէր որ մինակ մէկ կողմին խօսքովը շտայ իր վճիռը եւ թէ անհրաժեշտ չէր որ գործին երկու կողմն ալ քննութեան առնէր: Ժօրիսը սաւ թէ ինք երկու կողմն ալ լսած էր, բայց պաշտպանողականը չէր մտիկ ըրած եւ իրողութիւնը չէ ստուգած Օսմ. պաշտօնատարներէն: սակայն ինչորոյ վրայ տեղեկութիւն ունեցող քրիստոնեաներու զիմած եւ ասոնցմէ առած տեղեկութիւնները համաձայն գտած է իր լսածներուն:

Ըսուեցաւ իրեն որ մամուլը թէեւ չխօսեցաւ զէպերուն վրայ, սակայն անկողմնակալ չէր եւ լսածներն ալ Օսմ. կասալարութեան դէմ էին, ուստի պէտք էր ճշմարտութիւնը ստուգել, Օսմ. կառավարական պաշտօնեաներէն: Ժօրիսը սաւ թէ ինք այնպիսի պաշտօնեայի մը չհանդիպեցաւ, եւ թէեւ անգամ մը ուզեց պաշտօնեայի մը հետ տեսնել, բայց անիկա տեսնելով որ ինք օտար մըն է, քաշուեցաւ իր հետ տեսակցել: Դիտել տրուեցաւ իրեն որ ինք Սինկէրի վարչութեան մէջ պաշտօնեայ ըլլալով՝ հոն եկող գացող ծանօթ անձնաւորութիւններէ կրնար ճշմարտութեան վերահասու ըլլալ: Ժօրիսը սաւ որ ինք հաշուականութեան զիւանին մէջ պաշտօնեայ էր եւ եկող գացողներու հետ տեսնուելու առիթ չուէր: Հարցուեցաւ իրեն որ մարդիկ միշտ իրարու հետ յարաբերութեան մէջ կը կը գտնուին, արդ, ինք ինչու իսկ

գլուխը կոճղին վրայ և դահիճը կացինին հետ կը խաղար:

Ապա, մինչ զիւանապետը կսպասէր այն հարուածին՝ որ պիտի ուզարկը զինքը յաւիտեանականութեան գիրկը, պաշտօնեայ մը յառաջ եկաւ ու յայտարարեց թէ՛ Աստուած ու Ն. Վեհափառութիւնը կը շնորհէին իրեն իր կեանքը:

Ամբողջ տեսարանը ծրագրուած ու սարքուած էր Կատարինէի (*), կողմէ Օսղէրման ոտքի ելաւ վշտահար, կրճկեց շապիկը ու ըսաւ դահիճին.

— Տուր ինձ կեղծամս ու զլխարկաւ: Ինչպէս Օսղէրմանի նոյնպէս և այլոց հետ—նոյն զաւեշտը, նոյն դանդաղ, ահաբի պատրաստութիւնը մահուան և նոյն արձակումը:

Այսպէս եղիսարէթ սիրացաւ «Ներողի» տիտղոսին:

Մեծն Պետրոս հաստատած էր ցարերուն իրենց յաջորդները ընտրելու:

(*) Անտարակոյս, եղիսարէթ ըսել կուզէ, սակայն ապագրական թիւրիմացութեամբ մը գրուած է բնագրին մէջ Կատարինէ:

իրաւունքը, և հարկ եղաւ իր ժառանգը որոշել: Եղիսարէթ ընտրեց իր քեռորդին, Բրուսիացի իշխանիկ մը, հզօր ճաշակով մը ոգելից ըմպելիներու և խորշոջ մը պաղ ջուրէ:

Երբ ցարինայի իրեն ընտրութեան լուրը եկաւ, փութաց ան Ս. Բնութիւնսարկ, — կոր սղեկ մը, արտացոցուն ճակտով և ձկնախին աչքերով, որ անհանգարտօրէն կը քեքեկէր մինչ ազնուականներն իր ազտոտ ձեռքը կը համբուրէին ի պատիւ իրեն:

Հետաքրքիր տղեկ մըն էր սոյն Պետրոսը: Ախտատան մանչեր իր լաւագոյն ընկերներն էին, օղին իր սիրելի խմիչը և բնանաւորուած քօրքերու հետ խաղալը իր էն հաճելի զուարճութիւնը:

Կը հազնէր գերմանական բանակին վրայ ձեւուած համազգեստներ, որոնց համար բուռն հիացումը մը ունէր: Սովոր էր այս համազգեստներով հետազօտել իր խաղալիք զինուորներու բանակը, խիստ լրջօրէն ու զիտակցարար:

Պարզ խօսքով, կէս մը տխմար էր: Շատ կանուխ հառակէն իւր զօրաւոր ըմպելիներու ճաշակը նկատուած էր—ուրիշ ճաշակներ եւս ունէր՝ իրոնք լիկ հետուանց կակնարկուին:

Հարս մը բնտրուեցաւ իրեն: Վալէզէվսքի կանուանէ զէնի Յինչէն, որ, կը կարծէ թէ Սօֆիաի գերմաներէն ըլլալու է որովհետեւ, էն եւս, աղջիկն էր անարժէք ու մթին գերմանական արքունիքի մը մէջ փայլող իշխանի մը:

Մայրը տարաւ զէնի Ս. Բեթերսպուրկ, եւ այդ մայրը, որ յիմարական, ուրիշին գործերուն խառնուող կին մ'էր, գեղեցիկ ինթրիկներ սարքելու միտումով, գրեթէ զոհեց աղջկան ապագան՝ անհաճոյ դատարարով եղիսարէթի, Յինչէն ընդգրկեց ուղղափառ հաւատքը զուարթ փութաջանութեամբ մը և որդեգրեց Կատարինէ անունը: Այնուհետեւ իւր կենսագիրը մկրտեց զէնի «Մեծն Կատարինէ», ու այս անձանօթ գերման իշխանուհին սահմանուած էր հասնիլ Ռուսիոյ պատմութեան է՛ն երեւելի

կնոջ արժանիքին: Ռուսիա շարտագրեց զէնի, այլ որդեգրեց: Ընդունակ, զիւրազգած, նախաձեռնող, Կատարինէ ոռուս մը եղաւ մտքով և գործով: Այս գերման տիկինը՝ որ իբրեւ մանուկ՝ իւր քաղաքակից մանկիկներուն հետ կը խաղար, որ թողուց իւր բարեմիտ հայրը՝ տանելով հետը ընդարձակ և ծանր համոզում մը Լուսեւերականութեան վրայ և անոր բարեպաշտ խրատները՝ բողոքականութեան շաղկի մէջ մնալու, — այս միեւնոյն հնազանդ, հանգարտարարոյ մանուկը անմիջապէս մտաւ Յունական եկեղեցին, շուտով արհամարհեց իր կանուխ դատարարակութիւնը և դարձաւ ոռուս մը հոգիով, ունակութեամբ և յայրատ վարժուեցով:

Թարգմ. Մ. ՅՈՒԱԿ

«Տէլի Մէլ»

— Վ Ե Ր Զ —

լամիներու չը դիմեց : Ժորիս ըսաւ որ
բնականաբար խնդիրը ստուգելու հա-
մար Հայերուն դիմեց եւ անոնք ալ
հաստատեցին եւրոպական մէկ քանի
լրագիրներուն մէջ իր կարգացած
ները :

Հարցուեցաւ թէ հայկական ղեկավար
ժամանկ Պոլիս կը գտնուէ՞ր : Ժորիս
սոչն պատասխանեց , եւ ըսաւ որ
քէպէն վերջը Պոլիս եկած է : Ըս-
ուեցաւ որ քէպէն պատճառը հա-
ցուց թէ ոչ , պատասխանեց թէ այդ
կէտը քննած է : Բացատրուեցաւ ի-
րեն որ մինչ ամէն ոք , շնորհիւ վեհ-
կայսեր , կատարեալ անդորրութեամբ
եւ հանգստութեամբ կապէր իր բնա-
կավայրին մէջ , խել մը խայտատակ
անձեր հրազէն պարպելով եւ « ջուժ-
պարա » նստելով արիւն թափեցին :
Ժորիս ասոնց հակառակ՝ դարձեալ
չարդերու վրայ խօսեցաւ : Երբ ըս-
ուեցաւ իրեն որ յեղափոխականնե-
րու անխղճութեան օպացոյցը չ' մի-
թէ անոնց ասկէ զէնք եւ պայթու-
ցիկ նիւթ հայթայթելը , Ժորիս
դարձեալ շարունակեց չարդերու
վրայ խօսիլ :

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Երկու հարիւրէ աւելի թրքու-
հիներ ըլլալով առջեւ երթալով,
իրենց հանգստեան թռչակներու
անվճար մնալուն համար ցոյց մը
ըրբ բնու Սուլթանը զանոնք
հանգստացնելու համար, հրամա-
յած է հաղորդել անոնց թէ՛
մարտ 1 էն սկսեալ, — սկիզբ տաճ-
կական ելեմտական տարւոյ—
հանգստեան թռչակները վճար-
ուելու են կանոնաւոր կերպով,
այս թրքուհիներէն ոմանք յան-
դըզնած են պատասխանել թէ՛
թրքուհիները այնպէս չեն հի-
մայ ինչ որ էին 60 տարի առաջ,
դիմելու են անգլիական և ֆրան-
սական դեսպանութիւններուն, ո-
րովհետեւ սորված են ու գիտեն
անգլիերէն և ֆրանսերէն: Ասի
թէ և, տղայական է, սակայն շատ
ցուցադրող :

— Երկուրդի մէջ գտնուող Ա.
րայ և Ալպնասցի կայսերական
պահակազօրքերու միջեւ լուրջ
ընդհարում տեղի ունեցած է,
հրացանաձգութիւնը արդէն եր-
կուստեք սկսեց է, արքունիքի
մէջ գտնուող բաշաները միջա-
մտելով հազիւ կրցած են դադ-
րեցնել նոր ու աւելի լուրջ մի-
ջադեպէ մը կը վախցուի, որով-
հետեւ Ալպանիայէ հասած լու-
րերը կը հաւաստեն թէ՛ հոն կը
տիրապետէ բուռն ապստամբա-
կան շարժում մը, արքունիքի
մէջ գտնուած բոլոր ալպանացի-
ները վերջին ծայր յուզուած են:

— Պոլսէն ֆրանսական «Թան»
լրագրի կիմացնեն թէ, Բ. Գուռը
ամսոյս 3ին պարսիկ դեսպանին
ծանուցագիր մը տուած է, վեր-
ջերս Թուրքիոյ և Պարսկաստանի
միջեւ ծագած սահմանագլխի

միջադէպի առթիւ :

Այս ծանուցագիրը, Թուրքիոյ
կողմէն, տեղւոյն վրայ ուղարկ-
ուած յանձնախմբի տեղեկագրի
վրայ յորինուած է. Բ. Գուռը
քեզ կը պնդէ թէ՛ վիճելի հո-
ղաբաժինը Թուրքիոյ կը պատ-
կանի և պարսկական կառավա-
րութեան պահանջները կը մեր-
ժէ : Պոլսոյ պարսկական դեսպա-
նութիւնը, Բ. Գրան այս ծանու-
ցագրի բովանդակութիւնը անգ-
լիական և ռուսական դեսպանու-
թիւններուն հաղորդած է : Այն-
պէս կը թուի թէ՛ հետզհետէ
հարցը աւելի կը կ'ընտարի, շատ
յուսալի է որ պարսկական կա-
ռավարութիւնը անգլիական և
ռուսական միջամտութիւնը հրա-
ւիրէ :

— Վերջին նախարարական
խորհուրդը զարձակ թապա և
Ահապաի հարցով զբաղած է : Այս
խորհուրդի մէջ դարձեալ որո-
շեր են նորահիւս մերժագրով մը
պատասխանել անգլիական դես-
պանութեան, թուրք զինուորնե-
րու վիճելի երկրէն դուրս ելնե-
լու մասին ուղղած ծանուցագրին
ու շեշտել վերստին թէ՛ Թագան
թրքական երկիր է : Շատ հաւա-
նական է որ այս նոր մերժագիրը
պիտի ստիպէ Անգլիան նաւային
մեծ ցոյց մը ընել հաւանակա-
բար Զմիւռնիոյ առջեւ :

— Պաղատի խռովութիւնները
հետզհետէ սուր կերպարանք կը
ստանան, Միւլթէֆիք կոչուած
գաւառը կատարեալ ապստամբու-
թեան մէջ է : Սատան շէխը
թուրք զինուորներու դէմ յաղ-
թանակ մը տարած է. նա հիմայ
Սուգ էլ Շէխը քաղաքին մէջ կը
գտնուի եղեր :

— Արափիայէն հասած լուրերը
շատ վատ են : Սմբուլ հիճազը
դարձեալ ոտքի ելած է : Իպա
Բաշիտը, որուն տրամադրութեան
տակ կայ ամբողջ թրքական զօ-
րացուեղ մը, ստիպուեց է, իր
ախոյեանը եղող Իպա Սէտուտի
առջեւ յետո նահանջել : Եէմէ-
նի մէջ նմանապէս կացութիւնը
շատ վատ է : Փախուստ տալը
բարոյապէս բոլորովին փճացու-
ցած է Ֆէյլի բաշայի բանակը :
Այսպիսի գրութեան մը մէջ ,
անցեալ տարի Բիզա բաշայի
բանակէն 9 ջոկատ թշնամիին
կեղծը անցած է. հիմայ շատ կը
վախցուի որ դարձեալ նոյնը կրկ-
նուի : Սպարապետութիւնը յապ-
ճեպով զինուոր կուղարկէ, 12000
հոգիէ աւելի ճամբայ ելած է :
Պաղատան կիմացնեն թէ՛ շատ
մը դասալիք խմբեր սպաներ,
զինուորներ, այս նահանգիս մէջ
ապստամբած են :

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Բեթերսպուրկէն «Բըզի Բարի-

զիէն» լրագրի կիմացնեն. Մոսք-
վայէ հասած լուրերու համա-
ձայն, քիչ օրէն Գազանի և Աե-
րալեան երկաթուղոյ վրայ վերս-
տին գործադուլ յայտարարուի :
Արդէն Մոսքվա—Գազան երկա-
թուղին զինուորներէ կը պաշտ-
պանուի : Գիէվէն զրահաւորեալ
թրքներ բերած են, որոնք խոր-
տընկեցներով և թնդանթներով
զինուած են : Շատ կը վախցուի
որ գործադուլը մինչեւ Խրիմի
նահանգը կը տարածուի : Այնպէս
կը կարծուի թէ՛ այս գործա-
դուլը զուտ տնտեսական է :

— Մոսքվայի յետադիմական
լրագիրները կը գրեն թէ՛ մեծ
ու նոր ապստամբական շարժում
մը կը պատրաստուի : Մեծաքա-
նակ ուժանակներ, դժոխային
մեքենաներ և ուրիշ հրազէններ
կան պատրաստուած : Յեղափո-
խականներու ծրագիրը այս ան-
գամ պատնէշներ չ'ինել չէ, այլ
հրկիզել աղքատներու տնակնե-
լը, որպէսզի այս վերջիններս
ստիպեն դաշոյններով և վեցհար-
ուածեաններով դուրս դալ ու
միանալ յեղափոխականներուն :

— Բորգ-Արթուրի յանձնումը
քննելու համար յատկացուած
յանձնախումբը որոշեր է զօր-
վար Շիոսէլը դատի տալ : Ասկէ
աւելի հետաքրքրական է ծովա-
կալ նէպոկադովի դէմ բացուած
դատը, Սուչիմայի առջեւ տեղի
ունեցած անյալոյ ծովամարտի
համար : Ինչպէս որ յայտնի է
այս ծովամարտէն յետոյ նէպո-
կադով պաշտօնանկ եղաւ, նա կը
պնդէ թէ այս ծովամարտին կո-
րուստի պատճառը նոյն ինքը
Բոժէսոզվէնսքին է, Վկաներն են,
ծովակալ Բոժէսոզվէնսքին, ծովա-
յին նախարար Պիրիլովը, և բո-
լոր մասնակցող հրամանատար-
ները նաւամարտերուն :

Ծովակալ նէպոկադով կը պըն-
դէ թէ՛ որպէս վկայ կանչուին
նաև ճարտնայի ծովակալ Թօկօ և
Պէլա :

Ր Ո Ւ Մ Ա Ն Ի Ս

Բուժանիոյ թագաւորը հիւան
դութեան պատճառաւ կուզէ ինք
նակամ հրաժարիլ իր գահէն,
Ամեն քաղաքական կուսակցու-
թիւնները եռուզեռի մէջ են :
Թագաւորին 40 տարուան իշխա-
նապետութեան ժամանակամիջո-
ցի մէջ ցոյց տուած գործունէու-
թիւնը խիստ քննադատութեան
կենթարկուի : Ազատական մա-
մուլը կըսէ թէ՛ աւելի լաւ պիտի
ըլլայ եթէ թագը ժառանգէ իր
անդրանիկ զաւակը Գարոյը, և
ոչ թէ որդեգրուած Ֆէրտիան.
տը, որովհետեւ այս վերջինս
հոգեպէս չէ կրցած բուժանական
ազդին հետ սերտ կապուիլ,
միշտ մնացած է օտարին՝ իրեն

համար օտար երկրի մէջ :

Բուժանական սահմանագրու-
թեան շնորհ յօդուածին համա-
ձայն քաղաքական ամուսնութիւ-
նը վաւերական չէ, եթէ եկեղե-
ցական պսակ չէ եղած :

Ծերակոյտը հիմայ օրէնք մը
քուէարկած է սրով քաղաքական
ամուսնութիւնը միայն օրինաւոր
կը ճանչցուի, իսկ ուղղոր. քաղա-
քական ամուսնութեանէ ետքը,
կրնայ և եկեղեցի երթալ ու պը-
սակուիլ :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Ամսոյս 5ին ընկերվարական
կուսակցութիւնը մեծ շքով ու
նեց 1848ին եղած Պէրլինեան
յեղափոխութեան տարեգարձը :
Մայրաքաղաքին մէջ մօտաւորա-
պէս 200,000 հոգի մասնակցած
է այս ցոյցին : Բոլոր բանախօս-
ները փափաք յայտնեցին որ ի-
րենց ունկնդիրները 1848ին ա-
պստամբներու օրինակին հետե-
ւին :

Քաղաքական պաշտօնութիւնը
ամէն միջոց ձեռք առած էր փո-
ղոցներու մէջ ու է անկարգու-
թիւն մը չը պատահելու համար.
բոլոր զինուորականութիւնը կազմ
ու պատրաստ էր : Առանձին ջան-
քեր գործ դրած էին ցուցարար
ընկերվարականները մինչեւ կայ-
սերական արքունիքը չը մօտեց-
նելու համար, որուն առջեւ կու-
զէին ցոյց մը ընել :

Յ Բ Ա Ն Ա Ս

Գուրիէրի արկածի հետեւա-
նօք, հանքային բոլոր գործա-
ւորները գործադուլ ըրած են,
հետզհետէ գործադուլը կը ծա-
ւալի, առ այժմ անոնց թիւը
60000ի կը յանգի : Հանքային
ընկերութիւնները տրամադրին
10 0/0 յաւելում մը ընել գործա-
ւորներու աւուրջքին վրայ, իսկ
գործաւորները 15 0/0 կը պահան-
ջեն :

Մ Ա Ր Ո Ւ Ք

Ալժէզիրասի համաժողովը
մատնուած է ահեղ գրութեան,
Գերմանիան ետ չը կենար իր
պահանջներէն իսկ ֆրանսացիք
բոլորովին կը մերժեն Գերմանի-
ոյ բերած առաջարկը «Մարօգ-
եան Սղգ» պանդիւժ մտին :

Մ Ո Ւ Ր Ճ

Ա մ ս ա գ ի Ր
Գրական, Հասարակական եւ
Քաղաքական
Ի ս ժ ն ե գ ի ն ը
Արտասահմանի համար տարեկան
12 րուպի վեցամսեայ 7 րուպի
Հասցէ՝ Ր է տ ա ք ս ի օ ն տ ը լ ա
ր ը վ ի լ Մ Ո Ւ Ր Ճ
(Կովկաս) Թիֆլիզ